

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Տարեկան . . . 12 ծր.

Վեցամսեայ . . . 6 «

ԱՐՏԱՍԱՀԱՆ

Երկու քիւ միկ ծրարով

Տարեկան . . . 12 ծր.

Վեցամսեայ . . . 7 ծր.


ԱՄԵՐԻԿԱ

Տարեկան 2. 60

Վեցամսեայ 1. 50 ծրար «

Կ Ա Ն Խ Ի Կ

Ծանոցման . . . 10 դր
20 սանթիմ



Լ Ր Ա Գ Ի Ր

Ա Ջ Գ Ա Յ Ի Ն Ե Ւ Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՐՆՆ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐԱԹ

Հ Ա Ս Ց Ի

Riztion la journa

„Ira vounk“

VARNA (Bulgarie)

Редакция

НАВѢСТНИКЪ

Иравунк“

ВАРНА

Գրութուններ եւ լեւ
տրուիր

ՊԱՅՏՈՆԱԿԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ. ՅԵՂ ՄԻՈՒԹԵԱՆ

Հայ հասարակութեան յայտնի է որ Հայ. Յեղ. Միութիւնն ժամանակին հրաւիրագրեր ուղարկեց Հայ. Յեղափոխական բոլոր կուսակցութիւններուն՝ հրաւիրելով զանոնք մի ընդհանուր յեղափոխական գօնկրէսի, որուն նպատակը պիտի ըլլար մի ընդհանուր գործունէութեան ծրագրի մշակումով, ձուլել միացնել մէկ մարմնի մէջ բոլոր մէկը մէկ անշատ գործող կուսակցութիւնները, ազատելով այդ անհրաժեշտ գործողութեամբ հայրենիքի փրկութեան դատը այն անմիջական ու աննախանձելի կացութենէ՝ որուն մէջ կը գտնուէր այսօր։

Արդ, Հայ. Յեղ. Միութիւնն կուգայ ներկայիս յայտարարել Հայ հասարակութեան որ մեր այդ հայրենասիրական գիմումը, կուսակցութիւններու մօտ, բացարձակապէս ապագիւն մնաց։ Հրաւիրուած կուսակցութիւններէն երկուքը — Հայ. Յեղ. Դաշնակցութիւնը եւ Վերակազմաւ Հնչակեան կուսակցութիւնը — այլ եւ այլ պատրուակներով, որոնց վրայ աւելորդ կը համարենք կանգ առնել եւ որոնք ներկայացուած են նոյնութեամբ ստորեւ գրուած անոնց պատասխաններուն մէջ, հարկ համարած են մերժել իրենց մասնակցութիւնը։

Անոնցմէ երրորդը՝ Հին Հնչակեան կուսակցութիւնը՝ երկողովով մը իսկ չհաճեցաւ պատասխանել մեր հրաւիրագրին։

Հայ. Յեղ. Միութիւնն, անաչառ ըլլալու համար, պարտ անձին կը համարէ հրապարակաւ իր շնորհակալութիւնը յայտնել Հայ. Յեղ. Դաշնակցութեան եւ Վերակազմաւ Հնչակեան կուսակցութեան, որ գտնէ անպատասխանի չթողուցին իրենց սեղանու հրաւիրագրերը, իսկ ընդհակառակն, իր

խորին ցաւը՝ Հին Հնչակեան կուսակցութեան, որ իրեն ուղղուած հայրենասիրական ձայնին բնաւ կարեւորութիւն չտուաւ։

Սակայն Հայ. Յեղ. Միութիւնն հանգէպ այդ բացասական վերաբերմունքին շնորհիւ կուսակցութիւններն ալ ցոյց տուին առհասարակ դէպի հայրենասիրական ամենաբարձր եւ ամենաանհրաժեշտ գործ մը, որպիսին է հայրենիքի շուրջը կազմուելիք ընդհանուր Միութիւնը, ընդհանուր թշնամիին դէմ, չի կրնար չյայտնել իր խորին ցաւը, համոզուած ըլլալով, որ իրեն ցաւակից պիտի գտնէ ամբողջ հայութիւնը։

Այո՛, մենք խորապէս կը ցաւենք, որ գումարուելիք առաջին Հայ. Յեղ. Դաշնակցութեան որ անվրէպ բաղձալի միութիւնը պիտի բերէր յեղափոխական շարքերու եւ սրբութեան մէջ, եւ որով մենք այնչափ խանդավառ եղած էինք, եւ մեզի հետ, կը հաւատանք, բոլոր անկեղծ հայրենասէր հոգիները, վիժեց, եւ չիրականացաւ։

Բայց այդ ըսելով՝ է արդեօք թէ միութիւնը ասկէ վերջ չէ կարելի իրականացնել կուսակցութիւններէ մէջ, այդ ըսելով է արդեօք, թէ միանգամ ընդ միշտ պէտք է ձեռնթափ ըլլալ այդ բարձր, այդ վսեմ եւ սուրբ գաղափարին հետապնդումէն, եւ կամայ թէ ակամայ ձեռնածալ նստիլ եւ համակերպիլ այն ամենախայտառակ իրականութեան, որ ներկայիս Հայ. Յեղ. Դաշնակցութեան գիւղերէն է։

—Ո՛րչ։

Հայ. Յեղ. Միութիւնն յայտարարելէ յետոյ Հայ հասարակութեան իր Միութեան կօնգրէսի համար ի գործ դրուած ջանքերուն եւ գիմումներուն ապագիւն մնացած ըլլալը, հարկ կը համարի այս առիթով, վերստին յայտնելու հրապարակաւ, թէ կատարուած բացասական իրողութեան առաջ, եւ ամենափոքր չափով իսկ, յուսահատած չի զգար ինքզինքը, իր միութեան ջանքերուն մէջ, թէ ինչպէս ասկէ առաջ, այնպէս ալ ասկէ վերջ, աւելի

ուժով ու կորովով, պիտի շարունակէ անպատճառ իրականացնել Հայ ժողովուրդին կողմէն բաղձացուած եւ հայրենիքի փրկութեան միակ երաշխիքը եղող ընդհանուր Միութիւնը, Հայ. Յեղ. բոլոր կուսակցութիւններուն մէջ։

Հայ. Յեղ. Միութիւնն առաւել քան երբեք աւելի ուժով պիտի բռնէ Միութեան դրօշակը, մինչեւ որ բոլոր յեղափոխական շարքերը գտնուէն հաւաքուին, անոր շուրջը, անոր տակը, իբր միեւնոյն տանջուած հայրենիքին միեւնոյն հարազատ գաւառները, հաւատալով թէ այդ է իսկական պահանջը, զոր Հայ ժողովուրդը կը դնէ կուսակցութիւններուն առջեւ։

Ստորեւ կը դնենք մեր զրկած հրաւիրագրերու պատճէնը եւ մեր ստուցած պատասխանները, որոնք կը յանձնենք Հայ ժողովուրդի անաչառ քննութեան։

Ի Դիմաց Հայ. Յեղ. Միութեան
Բ. Պատգ. Ժողովոյ ՎԱՌՆԱՅԻ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ (Կնիք)

ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԻՐԱԳԻՐԻ
ՅԵՂ. ԿԵԴՐՈՆՆԵՐՈՒ ՂՐԿՈՒՄԸ

Յարգելի Հայրենակիցներ

Մայնիկէ Զեղ որ վաղուց Հայ ժողովուրդի ազատագրութեան դատը, ուրիշ խօսքով Մայր-Հայրենիքի ազատութեան հարցը Օսմանեան բռնապետական լուծէն, չեղուած ըլլալով իւր իսկական, իւր զբաղման ճանապարհէն, որուն մէջ նա պիտի գտնուէր, դադարած է, եթէ ոչ բոլորին, գոնէ ամենամեծ չափերով, ներշնչելու ընդհանուր հայութեան այն յոյսն ու հաւատքը, որոնք հիմնական պայմաններ են գոյութեան դժուարին կոյր մղող ազգերուն տալու համար անհրաժեշտ ոյժը, կորուզել եւ յարաւանութիւնը, առանց որոնց կը մեռնի ու կ'ոչնչանայ ամեն գեղեցիկ բան, ամեն գաղափար ամեն կեանք։

Յայտնի է ձեզ նմանապէս որ վաղուց փորձած ու բացուած է Հայ ժողովուրդեան զգացումներուն ու յեղափոխական գաղափարին միջեւ խոր հակասութիւն մը, որ, եթէ որքան կարելի է շուտով չը ձեռնարկուի հաւաքական խելացի ու զբաղման ջանքերով վերջնել մէջտեղէն, կըսպառ-

նայ բացարձակ եւ կատարեալ անյաջողութեան ու իսպառ վիժման մատնել նոյն այդ յեղափոխական գաղափարը, գաղափար մը՝ որ կոչուած է իրականացնելու այդ ընդհանուր ընդհանրամարտ միակ առարկան եղող բաղձանքը — Մայր-Հայրենիքի ազատութիւնը օտարի բռնապետական լուծէն։

Արդարեւ, եթէ մէկ կողմէն կարելի է հաստատել եւ ընդունել որ Հայ ժողովուրդը, ներկայ վայրկեան, որ ազգային ծայրագոյն ճգնաժամի վայրկեան է, ամեն ինչ կորսնցնելէ ետք, անթիւ անհամար զոհեր տալէ ու անասելի նեղութիւններու եւ տառապանքներու ենթարկուելէ ետք, ուրիշ բան տարած չէ իր հետ, ուրիշ բան ժառանգած չէ մօտիկ առեւելի անցեալէն, բայց միայն յոյսն ու հաւատքը դէպի յեղափոխական Մ. Գործը, դէպի մօտալուտ կարծուած բայց միշտ իր առջեւէն խոյս տուող երջանիկ ապագան, միւս կողմանէ անշարեւելի նաեւ չը հաստատել եւ չընդունել որ նոյն այդ յեղափոխական գործը, որուն միայն յարեւել հրաւիրուած էր ան, որպէս փրկութեան խորհուրդ, դժբաղդաբար զբերէ բացարձակապէս հեռի գտնուելէ այն բարձրութեան վրայ, որուն հասնելով միայն կարող է նա, Յեղ. Գաղափարը, յաւակնութիւն ունենալ վերադարձնելու ժողովուրդեան անոր կորսնցուցած կամ կորսնցնելու վրայ եղող յոյսն ու հաւատքը եւ փրկելու զայն այն ահարկու թշնամիէն որ կը կոչուի Անտարբերութիւն եւ որ մեր կարծիքով, աւելի վտանգաւորէ որքան որ չէ ինքը, Օսմանցին, մեր դարաւոր թշնամին։

Անտարբերութիւնը — անա՛հ երկուզը անա՛ վտանգը, անա՛ թշնամին։ Անտարբերութեան գիւղիկէն որ հեռագնաց կը նետուի եւ պիտի նետուի հայութիւնը, իրերու տրամաբանական եւ ճակատագրական ընթացքով իրերեւանական եւ անխուսափելի հետեւանք լքման, վնասութեան եւ յուսահատութեան, որոնք երթալով կը տիրապետեն անոր հոգեւոյն, անոր էութեանը, եթէ չը փութացուի, իմաստուն ու շուտափոյթ կարգադրութեամբ ու արմատական դարմանով առողջարար վերադարձ մը ստեղծել հոգիներու մէջ, գաղափարի վերաբերմամբ, դէպի հաւատք, դէպի ոգեւորութիւն։

Անհերքելի է որ հայկական իրերու վիճակը ընդհանրապէս, յեղափոխական իրերու վիճակը մասնաւորապէս՝ ծանր են եւ ճգնաժամային։ Անհերքելի է նմանապէս որ այս վերջինն է որ կոչուած է փրկելու առա-

Մենք չենք կարող վայրենան միակ կարծիք ուր Ձեր աչքէն խոյս տուած ըլլայ իրերու այս անմիջական և վստահաւոր դրութիւնը, որ այնքան ակնհայտ է: Ձեռք կարող կարծել նաեւ որ զայն դարձանելու համար յանձնառու չըլլաք կամ չուզէք յանձնառու ըլլալ ի գործ դնելու ամեն կարելի եւ հնարաւոր ջանքեր: Համադրուած ենք սակայն որ որքան ալ մեծ ըլլան մէկի կամ միւսը կողմէն ի գործ դրուած անանձնակի ջանքերը, անոնք, սակայն, դատաւարաբար պիտի ըլլան ամուլ մնալու, քանի այդ ջանքերը չեն ստանար հաւաքական եւ գիտակից ձեւ:

Չարքը ընդհանուր է եւ ընդհանուր ոչ ժողով ալ կարող է նա միայն վերցնել:

Մենք, Հայրենակիցներ չենք փոր ձեր միջամտիս ըլլալ իրերու այս տխուր կացութիւնը առաջ բերող պատճառներուն: Այդ բանին ո՛չ տեղն է եւ ո՛չ ալ ժամանակը: Այդ պատճառները, ի հարկէ, բազմաթիւ են եւ բազմակողմանի: Բայց սա անհերքելի է որ ներկայ չարքերը եւ մտքերը ու սրտերը վրայ ծանրացած ընդհանուր անորոշութիւնն ու անստուգանքները զլրատուապէս աւամանաւան չափերով ուրիշ բանի հետեւանք չեն, բայց եկէ՛ք այն իրողութեան որ երկար տարիներէ ի վեր Յեղ. Ս. Գործը ուրիշ վիճակով չէ ներկայացած Ս. զգին: Բայց եկէ՛ք պատահածն, ներքին եղբայրական անվերջ կռիւներու ու հակառակութիւններու, անհամբարաշխութեան, անմիաբանութեան վիճակ՝ մեր ամենուս համար մէկ եղող ընդհանուր խշնամուն առաջ:

Կուսակցական բաժանումները ներքին անմիաբանութիւնն — սո՛ւր Չարքերն մեծագոյն պատճառը:

Այսպէս ըլլալով հետեւաբար, իրերու իսկական վիճակը եւ անոր միակ համագլխ. ու բացատրիչ մեկնութիւնը, ինչը ըլլալայ այդ ողբալի կացութեան արժանական դարձանք:

Արժանական դարձանք, համագումար, ինչպէս կը կարծենք, նաեւ Դուք, ընդհանուր Միութիւններն է՝ Ընդհանուր Հայրենիքի, Ընդհանուր Դաշնակցի շուրջը:

Այո՛, Միութիւնն է՝ որ Միակն կարողէ դարձանել դրութիւնը: Նա՛ է որ կարող է վերադարձնել հայ ժողովրդեան անոր յոյսն ու հաւատքը դէպի Խաղաղ եւ բերել զայն, խմբովին, միահամուռ ոյժերով, կապելու փրկութեան այն միակ երաշխիքը բնագոյն գործին, որու աւանդապահներն մէկը կը ներկայանաք նաեւ Դուք, ի միջի այլոց:

Յեղ. Ընդհ. Միութիւնը յիշ. կուսակցութիւններու միջեւ, որոնք Մարք Հայրենիքի — Հայաստանի — Ազատութեան Դրօշը պարզած են, բաղձանքն է եւ՝ ընդհանուր հայ ժողովրդեան եւ՝ իրենց իսկ, յիշ. անջատ Մարմիններուն:

Մի ամենատարբ. մի ամենաբարձր հայրենասիրական պարտականութիւն կը հրամայէ մեզ ամենուս, բոլոր անկեղծ յեղափոխականներուս կեռի, կնքել այդ Միութիւնը, յանուն տանջուած Հայրենիքի յանուն մարտիրոսացած Ս. զգին, յանուն մեր յիշ. դրօշի պատուի:

Այս միեւնոյն զգացումներով տոգորուած, այս միեւնոյն համագումարով արագած, Հայրենակիցներ, Հայ Յեղ. Միութեանն Բ. Պատգամաւորական Ժողովը, որ վերջերս գումարաւորուեցաւ եւ իրեն առաջին ու մաս-

նաւոր ուղարկութեան անարկայ ըրաւ Ընդհանուր Միութեան խնդրը, կը հրաւիրէ Ձեզ ինչպէս նաեւ միւս ջոյր կուսակցութիւնները, Հայկական տաղան Ընդհանուր Կոնգրէսի, որուն նպատակը պէտք է ըլլայ, պահպանելով անխափա աշխատակը, որ ամենուս համար մէկէ եւ ամենուս դրօշակներու վրայ եւս միակը գրուած է, մշակել, կազմել ի՞նչ եւ ընդհանուր ծրագիր, գործունէութեան մի կողմակով, փոխանակ բաղձաթիւ եւ մէկը մէկ հակառակ ու մէկը մէկ չէզոքացնող, անդամաւորեցող ալ եւ ալ ծրագրերու, եւ ամուլ ազատել յիշ. ընդհ. գործը ներկայի անհանդուրժելի դարձած քառսէն ու անիշխանութիւնէն:

Հայրենակիցներ, ուղղելով Ձեզ այն հրաւերալիքը, Հայ յեղափոխական Միութեան կը կարծէ կատարած ըլլալ մի հայրենասիրական պարտականութիւն եւ սպասուած համարել զինքը այն ծանր պատասխանատուութիւնէն, զոր ունի ան հանդէպ այն ժողովրդեան, որու անունով եւ որու համար կը գործէ ան:

Մենք համագումար ենք որ Հ. Յ. կուսակցութիւնը, ոչ նուազ գիտակից միեւնոյն հայրենասիրական պարտականութեան եւ Ս. զգանքի պատասխանատուութեան զգացող միեւնոյն, եւ համագումար մեր առաջարկի դրականութեան ու նպատակաշարժութեան, պիտի փութայ պատասխանել մեր այս հրաւերալիքն ուղարկելով գումարաւորելի Կոնգրէսին իւր պատճառական պատգամաւորները:

Կը յայտնենք ի գիտութիւն ձեր որ Միութեանն Բ. պատգ. Ժողովը, սկզբունքով, որոշելէ յետոյ Ընդհ. Յեղ. Կոնգրէսի կազմութիւնը, յարմար եւ օգտակար գտաւ:

Ա) Հրաւիրել իւրաքանչիւր կուսակցութեան ԵՐԿՈՒ պատգամաւոր, որոնց թիւը ըլլալ, ընդամենը ութ, արուած ըլլալով Կոնգրէսին մասնակցող մարմիններ թիւը որ չորս է, Հ. Յ. Դաշնակցութեան. Նոր Հնչակեան կուսակցութեան, Հին հնչակեան կուսակցութեան եւ Հայ Յեղ. Միութեան. վեց Պատգամաւոր երէկ կուսակցութեանց կողմէն, երկուք ալ հրաւիրող Մարմինն:

Բ) Հրաւիրել Ս. զգին մէջ իրենց ազգային հեղինակութեամբ ու յիշ. զգացումներով յայտնի կարող անհատութիւններ, թուով երկուք կամ երեք եւ խորհրդատուական հանգամանքով եկէ՛ք ոչ ձայնի իրաւունքով: Գ) Կոնգրէսի գումարման վայրը ընտրել Վառնա քաղաքը որ բացի անկէ որ հայաշատ կեդրոնն է հայապահ եւ լրացնէ չարք մը գործնական եւ քաղաքական յարմար պայմաններ, իսկ գումարման ժամանակը ոչ աւել ինչ քան յունիսի 1-ը ըստ հին սովորի:

Դ) Նախապէս պատրաստել եւ ուղարկել կուսակցութիւններու հարցերու օրակարգ մը, որպէսզի պատգամաւորները, որքան կարելի է հարցերու ուսումնասիրութեամբ եւ մշակութեամբ ներկայանան Կոնգրէսին ապագային եւ աւելորդ վիճարարութիւններէ խոյս տուած ըլլալու նպատակաւ:

Այդ օրակարգը սոյն հրաւերագրի հետ ներփակ կուղարկենք ձեզ:

Պատգ. Ժողովն նոյնպէս յարմար գտաւ պարտաւորել Միութեանն Վառնայի յանձնախումբը յարաբերութեան մասին բոլոր հրաւիրուած կուսակցութիւններու ներկայացուցիչ մարմիններու հետ այն ա-

մեն տնորէնութեանց համար, որոնք հարկ ըլլալ Կոնգրէսի գումարաւոր իր ժամանակին եւ յաջողութեամբ գլուխ հանելու համար: Վառնայի Միութեանական Յանձնախումբին է ուրիշն որ պէտք է դրուին, ներքեւ գրուած հասցէով, հրաւերագրի պատասխանները, ինչպէս նաեւ այն ամեն գիտողութիւնները, որոնք կարող են ըլլալ կուսակցութեանց կողմանէ, վերաբերմամբ վերագրեալ կէտերուն, վերաբերմամբ օրակարգի հարցերուն, այս կամ այն կէտի մասին պահանջներէ բացառութիւններ, օրակարգի հարցերու մէջ աւելցուիլիք հարցերը, եթէ կան այդպէսները եւն: Բոլոր այս կարգի հարցադրութիւնները, մասնաւորապէս օրակարգին վերաբերեալները, պէտք է հասցնել Վառնայի Յանձնախումբին ամենաուշը մինչ մայիսի 1-ը ըստ հին սովորի. որմէ ետքը ոչ մէկ գիտողութիւն չէ կարող նկատողութեան առնուիլ:

Ուշացած գիտողութիւնները, սակայն, կարող են վերապահուիլ Դոնգրէսին, որ ընթացք կուտայ անոնց՝ եթէ հիմնաւոր գտնէ:

Մնալով ակնհայտ Ձեր պատասխանին, կը խնդրենք ընդունիլ մեր անկեղծ յարգանքային հաւատարմութիւնը:

Ի Դիմաց Հայ. Յեղ. Միութեանն Բ. Պատգ. Ժողովոյ եւ անոր որոշմամբի Վառնայի Յանձնախումբը

Քարտուղար Նախագահ ԿԱՅԵՐԿ ԼԱՅՈՒՆԻ

Ձեւ մարտ 904 Վառնա

Յ. Գ. Շիրիթ թեան տեղի չտալու համար, հարկ կը համարենք ըսել կրկին թէ ներփակ ուղարկուող օրակարգի հարցերը պարունակող փոփոխութիւնները, որպէս ամբողջացած: Վերջական եւ ամբողջացած փոփոխութիւնները ըլլալ, կուսակցութիւնները պարտին մինչեւ այդ թուականը հասցնել Վառնայի Միութեանն Յանձնախումբին այն բոլոր չը նախատեսուած հարցերը, որոնք գուցէ անոնց կողմանէ անհրաժեշտ կը համարուին մտցնել փոփոխութիւն մէջ: Արդէ ետքն է որ Վառնայի Յանձնախումբը, առաջարկուելիք նոր հարցերը մտցնելով անոր մէջ, պէտք է ամբողջացնէ զայն եւ, որպէս վերջնական, յետ գրէ բոլոր կուսակցութիւններուն, որպէսզի ամենք ամենքն ալ Կոնգրէսին ներկայանալէ բաւական առաջ իրենց ձեռքի մէջ ունենան ամբողջ օրակարգի հարցերու փոփոխութիւնը:

ՆՈՅՆ

ՕՐԱԿԱՐԳ

ՀԱՅ ՅԵՂ. ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀ. ԿՕՆԳՐԵՍԻ Պատգամաւոր Հ. Յ. Միութեանն Բ. Պատգ. Ժողովի կողմէ

- 1) Մըազրի կողմութիւն. ա) նպատակ. բ) կազմակերպութեան ձեւ. Գ) ներկայացուցիչ մարմին բնակավայրը:
- 2) Գործունէութեան եղանակ. ա) ընդհանուր արարտաբերութիւն. բ) խմբական մասնակի գործողութիւններ. գ) տրվումատիկական գործողութիւններու կարեւորութիւնը:
- 3) Ապստամբական վայրերի որոշողութիւնը:

- 4) Դաշնակցական հարցը վիճակակից կամ դրացի ժողովուրդներու հետ:
- 5) Յեղ. պրոպագանդայի միջոցները հայրենիքի մէջ ու անկէ դուրս:
- 6) Դրամական ոյժի հայթայթման միջոցները կամ կիրաւիք:

ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ
Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒՄՏԵՆՆ ԲԻՒՐՈ
12 մայիս 904
«Հ. Յ. Միութեան Յանձնախումբին»
Վառնա
Յարգելի Հայրենակիցներ,

Ստացանք ժամանակին ձեր մարտ 24-ից մեզ ուղղած հրաւերը՝ մասնակցելու «Հայկական առաջին ընդհանուր կոնգրէսին», որի նպատակը պէտք է լինի մի ծրագրով եւ գործունէութեան մի եղանակով միասնել ներկայումս գոյութիւն ունեցող հայ յեղափոխական կուսակցութիւնները:

Պատել ունինք յայտնելու Յանձնախումբիդ, որ այդ առթիւ «Դաշնակցութեան» պատասխան կը գտնէք այն որոշման մէջ, որ ընդ շնչէ վերջերս մեր կազմակերպութեան Ներքող Ընդհանուր Ժողովը եւ որը հրատարակուած է, ի գումարին հասարակութեան, «Դրօշակ» համար 4-ի մէջ:

Այդ որոշումն է, որ անկարելի համարելով «Դաշնակցութեան» եւ ձեր հրաւերած միւս երկու կուսակցութիւններին հետ ընդհանուր հոգի վրայ միութեան կամ համարաշխութիւն հաստատուել խնդրը, պարտաւորեցնուած մեզ տեղեկացուի Յանձնախումբիդ, որ «Դաշնակցութիւնը», զգրագրաբար, անկարող կը լինի արձագանք տալ ձեր առաջարկին:

Խնդրում ենք ընդունել մեր յարգանքային հաւատարմութիւնը:

Հ. Յ. Դ. ԱՐԵՒՄՏԵՆՆ ԲԻՒՐՈ
(Կնիք)

ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
Հնչ. Յ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

«Հ. Յ. Միութեան» Վառնայի
Յանձնախումբին

Յարգելի Հայրենակիցներ,

Դեռ քանի մը օր առաջ ստացանք ձեր 24 մարտ 1904 թուակիր նամակը:

Հայ յեղափոխական մարմիններուն մէջ եղբայրական միութիւն մը հաստատուած տեսնելու ձեր փափաքը գնահատելի է անտարակոյս:

Հնչակեան կուսակցութիւնը՝ ինչպէս դիտէք անշուշտ՝ նոյն այդ նպատակով, մասաւոր անցեալի մը մէջ, մարդկորէն ամեն կարելին փորձած է արդէն. եւ՝ հակառակ իր կրած ա՛յնքան գաւռն յուսախաբութիւններուն՝ ջերմապէս կուսակց կը միայն տակաւին իրական, ճշմարիտ ու ապահով միութեան՝ եւ կամ պէ՛թ համարաշխ գործակցութեան մը անյապաղ իրագործումին:

Վերջնական պատասխաններ ըստանալու համար ձեր նշանակած պայմանաժամը կարճ կը թուի մեզ:

Այսու հանդերձ, պիտի ջանանք՝ կարելի եղածին չափ շուտով՝ հազուադէպ կուսակցութեանս որոշումն ու սրտաւորութիւնները:

Ընդունեցէք մեր յարգանքները Հնչ. կուսակց. կեդր. վարչութիւն

1904 Մայիս 6 (Կնիք)

ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
ՀԵՂ. Յ. ԿՈՒՍՍԵՑՈՒԹԵԱՆ
ԹԻՒ 456

«Հ. Յ. ՄԻՐՈՒԹԻԱՆ» ՎԱՐՁՈՒ
Յ. ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻԱՆ

ՅԱՐԱԳԻՐԻ ՀԱՅՐԱՆԿԻՑՆԵՐԸ

Ինչպէս արդէն իմացուցած ենք ձեզ, ժամանակին ստացած ենք ձեր 24 մարտ 1933 թուականի նամակը, որով տուածարկած էք հայ յեղափոխական համաժողով մը գումարիւր՝ 3 պատակ ունենալով «Երկու» եւ կողմէ մը եւ ընդհանուր ծրագիր, գործունէութեան մի կողմէնով և՛:

Իր կրկնէք որ ձեր յայտնած այդ փախաբեր ճշմարտացի հայրենասիրական է. բայց մի քանի րոպէներու ետք, թէ այսքան փախուկ եւ կենսական խնդիր մը կարելի չէ լսկ զգացողներով լուծել՝ առանց չըջանալու հայ քննութեան:

Ինչպէս իսկապէս գործնական հոգի մը վրայ դնելու՝ եւ իրական արդիւնքի մը կարենալ յանգելու համար, անհրաժեշտ է ինկատի առնել ամբողջ կացութիւնը ինչպէս որ է, ի նկատի առնել կուսակցութեան փոխադարձ յարաբերութիւնները, անոնց մէջ աւելորդ սկզբունքի, տեսական եւ հասարակական վարդապետութիւններու եւ գործունէութեան եղանակի տարբերութիւնները. ի նկատի առնել նաեւ, վերջապէս, վերջին երեք չորս տարիներու ընթացքին փոքրուած բոլոր ձեռնարկներն ու պատահած դէպքերը, եւ յետոյ խորհիլ, թէ կարելի է արդեօք լուծուի իսկապէս ինչպէս որ է, հասնիլ ձեր առաջարկած ձեռքով զոհուի մը կողմէնէն:

Այս հարցումին պատասխանը ժողովական կը գտնենք զփաղաքար: Դուք ինչ կ'ընտրէք մեզ գումարութիւն, խորհրդակցելու միջոցով կամ գործակցելու նաեւ «Հին Հնչակեան» կոչուած մարմնի մը հետ, որ՝ առկա էին երէկ, ամէնէն եղիտական ընթացքով մը աշխատեցին ձեռքով, զիջումներով ու զոհողութիւններով իրագործուած «միութիւն» մը քանակը, իր ընդունած պայմաններուն դէմ դառնց. եւ համաձայնութեան, համեմատութեան ու հայ յեղափոխական ուժերու միտարար ձեռքով սկզբունքներու դաւաճանաց, եւ որ՝ մէկ խօսքով՝ ունեցաւ եւ ունի արարքներ որոնք բացարձակապէս անարժան կը կարծեսանք զինքը յեղափոխական ո՛ր եւ է մոզովի ու ո՛ր եւ է խորհուրդի մասնակցելու:

Մէկգի թողու՛ք «Հին Հնչակեան» կոչուած «կուսակցութեան» այս պարագան, որ աւելորդի կը դարձնէ մեզ ձեր առաջարկած գոնկրէին մասնակցի, պարտք կ'զգանք յիշեցնել ձեզ նոյնպէս, թէ Հնչակեան կուսակցութեան հայ յեղափոխական ամբողջական եղբայրութիւն մը իրականացրելու առկա չէ. անվերապահ ջանքերով մէկէն աւելի անգամներ փորձած է նաեւ միութիւն մը ունենալ «Դաշնակցական» կուսակցութեան հետ եւ սակայն աւելորդ է մանրամասնութեան մասնէ՝ իր բոլոր աշխատութիւններն ապարդիւն մնացած են զփաղաքար, որովհետեւ՝ եթէ «Հին Հնչակեան» կոչուած կուսակցութեան հակառակ իր դրաւոր եւ բերանացի յանձնարարութիւններուն չկրցաւ ու գեղ չկրցար թողուլ իր կարգ մը անձեւի մտահոգութիւններն ու ուսիրաչիւրէն է, միւս կողմէն Դաշնակցական կուսակցութիւնն ալ տրամադիր չը թուեցաւ երբեք իր կուսակցական

անհատականութիւնը գտնելու:

Այս հակընդդէմ տրամադրութիւնները բարեկրթութեան չենք տեսնել տակաւին:

Եւ սակայն, ա՛ղբովն կը գտնուինք վճռական ու ճշմարտացի շրջանի մը մէջ, որ իրաքանչիւր ճշմարտապէս հայրենասէր հայ յեղափոխական մարմնի պարտականութիւնն է՝ ամէն ջանք առաջ ու ամէն միջոցներով՝ Հայրենիքի ազատագրութեան գործին եւ հայ ազգի լինելու կամ չլինելու հարցին նորոգելու հաւաքական ու համերաշխ գործունէութեամբ: Ու ահա այս մասին մեր մէկ քանի հայեացքները կողմէնք պարզել՝ բաց քննարկեցինք ձեր ամենապարզ մը, առանց ո՛ր եւ է վերապահումի:

— Բուն Միութեան ծրագիրը մէկ զի դիւր է առաջ մտնել: Իրագործելի չէ: Դաշնակցական կուսակցութիւնը ինչպէս ըսինք իր անհատականութիւնը չուր գտնել:

Իրաց այս վիճակին մէջ պարտաւոր ենք նպատակին հասնելու՝ առանց սակայն կուսակցութիւններն իրարու մէջ ձուլելու կամ դանդաղ միացնելու ընդունալն ճիշդը վստահելու դարձնալ:

Ամէն մէկ կուսակցութիւն կրնայ իր յատուկ կազմակերպութիւնը պահել: Եւ սակայն ամէնքը ունենալու են համերաշխ գործակցութիւն մը, որուն նպատակն ըլլայ՝

«Պահելով հանդիման իւրաքանչիւրն իր կուսակցական անհատականութիւնը, ապաքին մահու եւ կենաց այս օրերուն, ձեռք ձեռքի տալ եւ միասնականալ ու աւելի ուժեղ կերպով կրնալ հասարակաց թշնամիին դէմ, առանց մեկգի խանգարելու»:

Եւ արդէն, Հնչակեան կուսակցութիւնը՝ հայ յեղափոխական բոլոր ուժերը միացնելու — ի մի ձուլելու նըպատակով եւ ծանր գոհողութիւններով մարդկօրէն ամէն կարելին փորձելէ եւ միշտ արգելքներու, չկամութիւններու եւ անկարելիութեան բաղժամ ըլլալէ վերջ իսկ, գոնէ վերջինը շանակեալ կերպով համերաշխ գործակցութեան մը շուրջը նպատակաւ յարմար համաձայնութիւն մը գտնեցինք: Կամար, 1904 Մարտ ամսոյ սկիզբը, այսինքն նախ քան ձեր Գոնկրէի առաջարկը՝ դիմում մը ունեցած է «Դաշնակցական» կուսակցութեան մօտ, ու հիմա կըստեսէ, թէ վերջնական ինչ արդիւնք պիտի տայ իր այս նոր ձեռնարկը:

Իր սիրենք յուսալ որ գէթ այս անգամ մեր ջանքերն ապարդիւն չեն անցնիր եւ հայ յեղափոխական մարմիններուն միջեւ իմաստ կը հաստատուի համաձայնութիւն մը, որով կարելի ըլլայ վերջ մը տալ մէկգի խանգարող կամ ջլատող ամեն պատահականութեան եւ ամէն պատահարի ու ժանաւանդ՝ կարելի ըլլայ, աւելի քան երբեք հզօր ու ներդաշնակ գործունէութեամբ մը առաջ տանիլ հայ յեղափոխական նուիրական ու վրկաբար ու ընդհանրական ճիշդ:

Եւ կը խորհնք որ «Հայ յեղ. Միութիւն» իր նպատակին դէմ գործած չըլլար, ընդհակառակը, եթէ մեր վերոյիշեալ ծրագրին յաջողութեան աջակցիլ ուզէ՝ իր բոլորական կարողութեամբ:

Ամեն անոնք, որոնց բաղձանքն է Հայ յեղափոխական Գաղափարին՝ ու Գործին շուրջ բոլոր կուսակցութեանց կողմէն անխաբար ու ապահովիչ համերաշխութիւն մը իրականացած տեսնել, ամեն անոնք պարտաւոր են, կը կարենք, նկատողութեան առնել

Հնչակեան այս նոր եւ անվիճելիօրէն անկեղծ ու անշահախնդիր ու գործնական ճիշդ, ու պարտաւոր են մահաւանդ տմեն կերպով զայն դիւրացնելու աշխատիլ յարելով այս կամ այն կազմակերպութեան եւ զգուշանալով մասնաորակէն նոր կուսակցութեան մը ծնունդ տալէ, ինչ որ կրնայ գոնէ նորանոր գոհարութեանց պատճառ գտնալ ապագային:

Արդ՝ հաւատք ունենալով ձեր անկեղծութեան եւ հայրենասիրութեան վրայ, կը յուսանք որ պիտի ջանաք՝ ձեր կարգին՝ նուազեցնել ու հեռացնել բոլոր այն դժուարութիւններն ու խնդիրները, որոնք կըրնան արգելք հանդիսանալ մեր կողմէն առաջարկուած համերաշխ գործակցութեան:

Ի հարկին, եւ իր ժամանակին, կրնանք «Դաշնակցական» կուսակցութեան հետ մեր այս վերջին բանակցութեան արդիւնքը հաղորդել ձեզ:

Ընդունեցէք մեր խորին յարգանքները

Հնչ. կուս. կեդր. վարչ. կողմէն
(Կնիք)

ԿԵԴՐ. ՎԱՐՁՈՒԹԻՒՆ
Հ. Յ. ԿՈՒՍՍԵՑՈՒԹԵԱՆ

«Հ. Յ. ՄԻՐՈՒԹԻԱՆ» ՎԱՐՁՈՒ
ՅԱՆՈՒՄԱՐՈՒԹԻԱՆ

ՅԱՐԱԳԻՐԻ ՀԱՅՐԱՆԿԻՑՆԵՐԸ

Իր հաստատանք մեր թիւ 450 եւ 456 նամակները, որոնց վերջինով խոստացած էինք իմացնել ձեզ՝ «Դաշնակցական» կուսակցութեան հետ մեր առաջարկած համաձայնութեան արդիւնքը:

Ներկայիս կը հաղորդենք ձեզ, թէ յիշեալ կուսակցութիւնը կը մերժէ գէպի միութիւնն ո՛ր եւ է քայլ ընելու եւ «անկարելի կը նկատէ Ընդ. Համերաշխութիւն հաստատել արդի կուսակցութիւններէն ո՛ր եւ է մէկուն հետ»:

«Դաշնակցական» կուսակցութեան այս յայտարարութիւնը անգամ մըն ալ ի դերեւ կը հանէ գոնէ համերաշխ գործակցութեան մեր յոյսը, եւ իրովն կարգաւորեցէ մեր կարգ մը կործակելը. զորս յայտնած էինք մեր կողմէն ձեզ ուղղուած 456 թիւ նամակով եւ զորս կրկին ձեր խորին ուշադրութեան կը յանձնարարենք:

Յարգանք
Հնչ. կուս. կեդր. վարչ. կողմէն
(ստորագր. եւ կնիք)

ԹԱՏՐՈՆ

Տ. Տ. Գալէմէանի եւ Ա. Թէրզեանի ի նպատակ տարաբնուան թատերախաղը՝ զոր մեր նախընտրեալ թիւով ծանուցած էինք եւ որ յետագումն էր Տիկին Լ. Յակոբեանի հիւանդութեան պատճառաւ վաղը իրիկուն պիտի ներկայացուի Ռիկայի պարտէզին մէջ:

Կը սպասուի որ թատերասէր հասարակութիւնը իր ներկայութեամբ քաջալերէ նպատաւոր եալները, որոնք գիտցած են ճշգրտելու ընտիր գործերէն մին ընտրել հանդիսատեսներուն հաճելի ժամանց մը ընծայելու համար:

«ԻՐԱՆՈՒՆՔ» Ի ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Յ. Յովակիմեան Ասլա՝ քեօյ— կազէթա պէտէլինի վաղընտա պապու իրմիջիդ:

Ա. Մարտիկեան Յունաստան— Ըստացած ենք 15 ֆր.:

Ս. Փաշաեան Պրահա— Հանգանակուած գրամին տեղը հասած ըլլալը հաստատող պաշտօնական նամակը կամ մեզ զրկեցէք եւ կամ տեղեւոյ քահանային ցոյց տալով իրմէ վկայադիր մը ուղեցէք:

Մ. Պաշաեան Թրեօլա— Ձեր բաժնեգիրը ուղղակի մեզ զրկեցէք անյայտաղ:

Կապրովա— Պողոս Կարապետեան եւ Յակոբ Տեր Պողոսեան— Ընկերակցաբար ձեր առած լրագրին ստակը չուտով զրկեցէք:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն

Ազգային երկսեռ վարժարաններու Հոգաբարձութիւնը կը ծանուցանէ արգոյ հասարակութեան՝ որ վարժարանները պիտի բացուին յառաջիկայ Սեպտեմբեր 1-ին:

Մուտքի արձանագրութիւնք կըսկըսին յառաջիկայ կիւրակի օգոստոս 22-ին առաւօտեան ժամը 9-էն մինչեւ 12 ամէն օր, Ազգային խորհուրդարանի մէջ:

Կանոնաւոր դասախօսութիւնք պիտի սկսին Սեպտեմբեր 6-ին, սակայն աշակերտներու ներկայութիւնը պարտաւորիչ է ամբողջ 1-ին:

Պիտի կարգուի Մասնախումբ, որ պիտի բաժանէ թոշակաւոր աշակերտները երեք դասակարգի. Ա. ֆր. 4-13-ֆր. 3-9. 1-2: 2րդ պիտի ընդունուին միայն վկայեալ աղքատները:

Թոշակները վճարելի են կանխիկ իւրաքանչիւր ամսոյ վրայ:

Այս տարի Աղջկանց եւ Մանչերու վարժարանները իրարմէ զատուած պիտի ըլլան:

Ասկէ զատ, երկու սեռի նախակրթարաններու համար ալ պիտի բացուի Ե. դասարան, որ շարունակութիւնն է նախընտրեալ Դ. դասարանի:

Հոգաբարձութիւնը մտադիր է նաեւ, նոյն իսկ այս տարուէն, բանալ 2. դասարան, եթէ ատոր համար բաւարար թուով եւ համապատասխան պատրաստութեամբ տղակերտներ ներկայանան:

Դպրոցներու բարեկարգութեան եւ յառաջդիմութեան համար Հոգաբարձութիւնը ամէն կարելի ջանքեր գործ պիտի գնէ. ուստի կը յուսանք թէ՛ Հասարակութիւնն ալ իր կողմէն չը զլանայ իրեն տմեն կերպով ձեռնտու ըլլալ, որպէս զի գործը գրեւծ ջանքերը եւ այս տարուայ համար մասնաւորապէս կ'զգացնէ իրական գոհողութիւնները ապարդիւն չմնան:

Ի Դիմաց Ազգ. երկ. վարժարաններու Հոգաբարձութեան
Ատենադպիր Վ. Ատենապետ
Զգոն Գ. Թոպալյըզեան

